

«ԷյՋ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ

2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ֆինանսական հաշվետվություններին
կից

Բանկի ղեկավարության տարեկան զեկույցը և հայտարարությունը

Բանկի ղեկավարության հայտարարությունը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՍ») պահանջների համաձայն:

Ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ և լիարժեք ձևով արտացոլում են Բանկի ֆինանսական վիճակը առ 31 դեկտեմբերի 2008թ., ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի նրա գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը:

Մույն հայտարարությանը կից ներկայացված է նաև Բանկի ղեկավարության տարեկան զեկույցը, որը ճշմարիտ և լիարժեք ձևով արտացոլում է Բանկի գործունեության վերլուծությունը, ինչպես նաև ամփոփ ֆինանսական տվյալները:

Բանկի ղեկավարությունը պատասխանատու է բանկի ֆինանսական վիճակը (բոլոր էական առումներով) արժանահավատորեն արտացոլող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար: Այդ կապակցությամբ բանկի ղեկավարությունը պատասխանատու է՝

հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության, խորհրդի կողմից հաստատման և դրա հետևողականորեն կիրառման համար,

հիմնավորված գնահատումներ և հաշվարկներ կատարելու համար,

հաշվապահական հաշիվների գրանցումների ճշգրիտ վարման համար,

Հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջների պահպանման համար,

ֆինանսական հաշվետվությունները անընդհատության սկզբունքի հիման վրա պատրաստելու համար, բանի դեռ հանգամանքներն այլ կերպ չեն թելադրում,

ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին համապատասխանող արդյունավետ և հուսալի ներքին հսկողության համակարգի մշակման, ներդրման և գործունեության ապահովման համար,

Բանկի ֆինանսական վիճակի վերաբերյալ ժամանակին և բավարար ճշտությամբ տեղեկատվություն ապահովող, ՀՀ օրենսդրությանը և հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխանող հաշվապահական հաշվառման գործուն համակարգի ներդրման համար,

Բանկի ակտիվների պահպանության, խարդախությունների և անճշտությունների բացահայտման ու կանխման ուղղությամբ՝ իր իրավասությունների սահմաններում, միջոցներ ձեռնարկելու համար:



Թիմ Սլեյքեր
Գլխավոր գործադիր տնօրեն

22 ապրիլի 2009թ.



Բանկի ղեկավարության տարեկան զեկույցը

Գործունեության ակնարկ

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն տրամադրում է ֆինանսական ծառայությունների լայն ընտրանի: Պահպանելով ֆինանսական կայուն և առողջ բազա՝ Բանկը շարունակեց ընդլայնել իր գործառնությունների շրջանակը:

Գործունեության տասներեքերորդ տարվա ընթացքում շարունակվել են վերջին տարիներին ուրվագծված կայուն աճի միտումները: Բանկին հաջողվեց զարգացնել իր կողմից առաջարկվող ծառայությունները և ավելացնել հաճախորդների քանակը:

2008 թվականը կարելի է որակել որպես ևս մեկ հաջողված տարի Բանկի համար: Տարվա ամենամեծ նվաճումներից է Բանկի նոր Ազգային Սպասարկման Կենտրոնի (ԱՍԿ) և երկու մասնաճյուղերի բացումը, այսպիսով մասնաճյուղերի ընդհանուր թիվը հասցնելով տասի: Մասնաճյուղերի ցանցի ընդլայնումը և հաճախորդների հետ չառնչվող գործառնական ֆունկցիաների տեղափոխումը ԱՍԿ հնարավորություն տվեցին Բանկին առավել լավացնել հաճախորդների սպասարկման որակը, որի հետևանքով էականորեն աճեց հաճախորդների հաշիվների քանակը՝ տարեվերջի դրությամբ բանկը սպասարկել է 99,071 բանկային և ավանդային հաշիվներ, ինչը գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը ավելի քան 60 տոկոսով:

Հետևելով իր հիմնական սկզբունքներին և արժեքներին՝ Բանկը կարողացել է ավելացնել իր վարկային պորտֆելը 40%-ով՝ 2007թ-ի համեմատ: 2008թ-ին շարունակեց զարգանալ անհատական բանկային ծառայությունների ոլորտը: Առևտրային վարկերը աճեցին 39%-ով և Բանկը շարունակում է պահպանել բարձրորակ պորտֆել և հաճախորդների բազա:

2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ-ի ընդհանուր ակտիվները գերազանցել են 122 մլրդ ՀՀ դրամը, և ակտիվների մեծությամբ բանկը շարունակում է մնալ խոշորագույններից մեկը ՀՀ բանկային համակարգում:

2008թ. ընթացքում Բանկը զգալիորեն ընդլայնել է ավտոմատ գանձման մեքենաների իր ցանցը՝ ԱԳՄ-ների քանակը հասցնելով 43-ի:

2008թ. գործունեության արդյունքներով Նյու Յորքի «Գլոբալ Ֆայնենսի» կողմից Բանկը ճանաչվել է Տարվա լավագույն բանկը Հայաստանում, «Աշխարհի Զարգացող Շուկաների Լավագույն Բանկն Ասիայում» մրցանակակարգում:

Այնուամենայնիվ, այս արդյունքներին հնարավոր չէր լինի հասնել առանց Հայաստանում առկա բարձր տնտեսական աճի, առանց Բանկի թվով 58,500 հաճախորդների գործարար հաջողության, նվիրվածության և աջակցության, ինչպես նաև առանց Բանկի թվով 412 բարձրակարգ աշխատակիցների անսահման ջանասիրության:

Հատկանշական է նաև Բանկի կորպորատիվ պատասխանատվությունը, որի շրջանակներում Բանկն իրականացնում է ներդրումների տեղական զարգացման ծրագրերում, ինչպես նաև մասնակցում է Էյչ-Էս-Բի-Սի Խմբի կրթության և բնապահպանական ծրագրերի իրականացմանը Հայաստանում: Օրինակ՝ մասնակցությունը Future First Program ծրագրին, ծառատունկների կազմակերպմանը, «Գեկիմիայով» տառապող երեխաներին օգնելու համար միջոցների հայթայթման գործում հաճախորդների և աշխատակիցների ներգրավմանը, հին պահպանված նկարների հիման վրա Սևանա լճի ավանդական առագաստանավերից մեկի վերականգմանը, UNICEF-ի հետ համատեղ «Օգնենք երեխաներին ապրել ընտանիքում» ծրագրի իրականացմանը, որի նպատակն է աջակցել Հայաստանում անապահով ընտանիքներին և նվազեցնել մանկատուն հանձնվող երեխաների քանակը:

Ֆինանսական վերլուծություն

Հարկերի վճարումից հետո Բանկի զուտ շահույթը հաշվետու ժամանակաշրջանի համար կազմել է 3,914 մլն դրամ, որը բանկի հիմնադրման պահից ի վեր ստացված լավագույն արդյունքն է: Բանկի գործառնությունների ծավալի ընդլայնման արդյունքում Բանկի զուտ տոկոսային եկամուտը և այլ գործառնական եկամուտն աճել են՝ կազմելով համապատասխանաբար 7,637 և 3,643 մլն դրամ: Գործառնական ծախսերը կազմել են 6,152 մլն դրամ: Ծախս/եկամուտ հարաբերակցությունը 2008թ-ի համար կազմել է 54.54%: Կապիտալի եկամտաբերության ցուցանիշը 2008թ-ի համար կազմել է 29.05%:

2008 թվականին բանկը չի վճարել շահաբաժիններ՝ շահույթն ուղղելով Բանկի հետագա զարգացմանը: Բանկի համար ներդրումների հիմնական ոլորտը նոր տեխնոլոգիաներն են, և ի լրումն ներկայումս մատուցվող ծառայություններին Բանկը պլանավորում է 2009 թվականին հաճախորդներին առաջարկել ինտերնետային և հեռախոսային բանկային ծառայություններ:

Ռիսկերի կառավարում

Ռիսկերի կառավարումն էական գործոն է բանկային ոլորտի համար և Բանկի գործառնությունների կարևոր տարր է: Բանկի հիմնական ռիսկերը կապված են շուկայական ռիսկի հետ, որը ներառում է սոկոսադրույթի և արժուրային ռիսկերը, ինչպես նաև վարկային և իրացվելիության ռիսկերի հետ: Ռիսկերի կառավարման քաղաքականության և ընթացակարգերի մասին մանրամասն տեղեկատվությունը ըստ ռիսկի տեսակների ներկայացված է ֆինանսական հաշվետվությունների փաթեթում (ժանուրագրություն 26):

Հաշվետու ամսաքվից հետո տեղի ունեցած իրադարձություններ

Հաշվետու ամսաքվից հետո տեղի ունեցած կարևոր իրադարձությունները, որոնք ազդեցություն են ունեցել Բանկի ֆինանսական վիճակի վրա ներկայացված են ֆինանսական հաշվետվությունների փաթեթում (ժանուրագրություն 37):



Թիմ Սլեյքեր
Գլխավոր գործադիր տնօրեն

22 ապրիլի 2009թ.

